ծնօղաց իւրոց շնորհօքն Աստուծոյ ծնեալ և ծընօղն առողջ են հանդերձ բոլոր ընտանեօք, սպասին ցնծութեամբ ընդունիլ սէր ձեր 'ի առաջի մեր դեկտեմբերի 17, պատկեր աւուր շաբաթ առաւօտեան եօթն ժամէն մինչև ցը 10 ժամ, նոյն աւուր յիրիկուան 5 ժամէն մինչև ցը ութն ժամ, ով ոք 'ի ձէնջ կամի փառաւոր մեզ առնել պատուելով մեզ 'ի նոյն սահմանեալ ժամանակի պատրաստի գացի մեզ շնորհակալութեամբ, և այսպէս հարսանեաց։

Եւ բարութիւն բանիս յոյժ լիցի նախ որ մի անգամ միմիայն պատրաստութեամբ և միջոց մի աւուր ժամանակաւ փրծանի 'ի զանազան ծախէ և նեղութենէ, և նոյն Օրն 'ի տունն նորա նմանի իբր տօն հանդիսի գեղեցիկ փայլմամբ և այլն։

ԳԼՈՒԽ ՅԺԷ.

Ոչ ոք առանց հրաւիրում մի մտցէ 'ի տուն ննջեցելոյ ոչ ընկերակցութիւն գիոյն առ 'ի գերեզման, և ոչ մխիթարելոյ ճնացորդաց, բայց 'ի նոցանէ որ գոցեն զինքեանց հրաւիրեալ, նաև հրաւիրեալքն եթէ դասք քահանայից, և եթէ հասարակ ժողովրդոց ոչ լինիցի վասն բազմենալոյ 'ի ճաշ և ոչ ընթրիս, եթէ ոչ միայն պատուել ճնացորդս ննջեցելոյն ելցեն 'ի տանէ ընկերակ-